Կայացել է հայագիտության հարցերով խորհրդի նիստ

Վարչապետ **Տիգրան Սարգսյանի** նախագահությամբ կառավարությունում տեղի է ունեցել հայագիտության հարցերով խորհրդի հերթական նիստը, հայտնում են *ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից*:

Համաձայն հաստատված օրակարգի՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը** զեկուցել է «Հայաստանի Հանրապետության հայագիտության ոլորտի զարգացման 2010–2025 թթ. ռազմավարության» իրականացման ծրագրով նախատեսված միջոցառումների ընթացքի մասին: Նշենք, որ 2012 թ. հունվարի 12-ի նիստում ՀՀ կառավարությունը հավանություն էր տվել հայագիտության զարգացման հայեցակարգին, ոլորտի զարգացման 2012–2025 թթ. ռազմավարությանը եւ դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին: Փաստաթղթերի հիմնական նպատակն է պետության եւ հայ մտավորականության ջանքերով հայագիտությունը վերածել հայության ազգային եւ մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոնի:

Հաջորդիվ ԳԱԱ իսկական անդամ, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը** ներկայացրել է հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ստեղծման հարցը:

Շարունակությունը՝ էջ 2

Կայացել է հայագիտության հարցերով խորհրդի նիստ

Սկիզբը՝ էջ 1

Նա խոսել է հիմնադրամի գործունեության նպատակների եւ ուղղություններին մասին՝ նշելով, որ այն ուղղված է լինելու հայագիտության զարգացմանը նպաստող ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Այս առնչությամբ վարչապետ Սարգսյանը նշել է. «*Մենք հաստատել ենք գիտության զարգացման առաջնայնությունները, եւ հայագիտությունն այդ շարքում առաջնահերթ ֆինանսավորում է ստանում, այդ թվում՝ նաեւ ակադեմիական համակարգում ասպիրանտուրայի, գիտական աշխատանքների, հետազոտությունների եւ ինստիտուտների գործունեության համար: Փորձում ենք հայագիտության զարգացման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծել*»: Այնուհետեւ ծավալվել է մտքերի փոխանակում, որի ընթացքում խորհրդի անդամներն իրենց տեսակետն են ներկայացրել քննարկվող հարցի վերաբերյալ:

Նիստում արծարծվել են կանոնադրական հարցեր եւ: